ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-02

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 2 նիստի

27-ը հոկտեմբեր 2023թ.

ԱԺ 314 սենյակ, ժ.14:00

Ս.թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2-րդ նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Խորհուրդը ստուգեց Հովհաննես Նալբանդյանի, Հայկուհի Հարությունյանի, Նարինե Ավետիսյանի, Կարեն Հակոբյանի և Խաչիկ Խոջայանի ներկայացրած փաստաթղթերի ամբողջականությունը:

Խորհրդի հինգ անդամներից նիստին մասնակցում էին չորսը՝ Արուսյակ Ջուլհակյանը, Արմինե Թումասյանը, Նինա Փիրումյանը, Արմեն Ասատրյանը: Նիստը վարում էր՝ Արուսյակ Ջուլհակյան

Նիստին մասնակցում էր նաև ԱԺ աշխատակազմից Դիաննա Աթոյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Ա.Ջուլհակյանը ներկայացրեց Հովհաննես Նալբանդյանի, Հայկուհի Հարությունյանի, Նարինե Ավետիսյանի ներկայացրած հայտերը:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը հաստատեց Հովհաննես Նալբանդյանի, Հայկուհի Հարությունյանի, Նարինե Ավետիսյանի ներկայացրած փաստաթղթերի ամբողջականությունը* *Կողմ 4, դեմ 0*
Օրակարգի 2-րդ հարց	Ա.Ջուլհակյանը ներկայացրեց Կարեն Հակոբյանի և Խաչիկ Խոջանյանի ներկայացրած հայտերը:
Խորհրդի	*Կարեն Հակոբյանի և Խաչիկ Խոջանյանի ներկայացրած փաստաթղթերը*

որոշումը	*թերի էին, ուստի խորհուրդը քվեարկությամբ որոշեց վերադարձնել Կարեն Հակոբյանի և Խաչիկ Խոջանյանի ներկայացրած փաստաթղթերը և հնարավորություն տալ առկա թերությունները լրացնել մինչև 31.10.2023թ. ներառյալ:* *Կողմ 4 դեմ 0*

Նիստը վարող՝ Ա. Զուլհակյանը

Նիստի քարտուղար՝ Դ.Աթոյան